

Թագաւոր մեր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան: Լցո զմեզ Հոգւով սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյք եւ մի՛ ա՝ մաշեցուք: Զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց» (215): Եղիշէ սոյն աղօթքը Ղեւոնդեանց ալ պաշտել կու տայ իրենց ճաշէն վերջ (134). որուն կ'ակնարկէ նաեւ Փարպեցին՝ երբ կ'ըսէ. «Փառաշորերով եւ օրհնելով զԱստուած՝ կատարէին զաղօթսն», (267). եւ նախարարաց կոչնոց համար՝ թէ «օրհնելով զպարգեւատուն Քրիստոս եւ զտուրիչ եւ զցուցիչ ամենայն բարութեանց» (28), ուր շեղագիրք Եղիշէի տուած աղօթքին բառերն են: Այնու՝ որ այս աղօթքը, թե՛ թեւ ընդարձակմամբ մը դեռ պահուած մեր մէջ, ազգային էր եւ Եղիշէի կողմանէ յարմարաբար տրուած հարաւային միանձանց, կրնանք հետեւցնել՝ թէ ասոնց ճաշէ յառաջ մատուցած փառատրութիւնն ալ ազգային էր: Եւ թէ լոկ այդ երկուքն էին սեղանօրհնէից կանոնը:

Իբր հինգ դար վերջ Նարեկացին կ'ականդէ մեզ ուրիշ կանոն մը, որով կը վարէին Նիգ գաւառի Թեղենիք կոչուած անուանի մենաստանին մէջ: Նախ քան ճաշը կը դնէ «սաղմոս եւ քարոզ որպէս կարգեալ է». եւ կը յարէ. «յառաջ յիշեա